ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 27-2

ք. Երևան 09 դեկտեմբերի 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս նախագահ Արզուման Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N2 աղյուսակի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11002. Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N2121-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունվարի 14-ի «1115. երիտասարդության ծրագիր» բյուջետային ծրագրի գծով նախատեսված հատկացումների բաշխումն ըստ առանձին միջոցառումների հաստատելու մասին» N 26-Ա/2 հրամանը «www.antitrafficking.am կայքի պահպանում և թարմացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել 4.212.000 (չորս միլիոն երկու հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա.կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1.իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրով հիմք հանդիսացող նախահաշվի.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պետական մարմին ներկայացնել ֆինանսական եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով նախատեսված կարգի, իսկ եռամսյակային և տարեկան բովանդակային հաշվետվությունները՝ սույն պայմանագրով սահմանված կարգով.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.8 եթե իրականացվող ծրագիրը ենթակա չէ ավելացված արժեքով հարկի հարկման կամ ենթակա է հարկման պետական բյուջեից ավելացված արժեքի հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա վերը նշված հարկատեսակի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները Ծրագրի իրականացման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.4.9. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. չծախսված գումարի վերջնական տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է Կազմակերպությանը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N3 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի:

4.2. Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1.Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար Պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացուցային օրվա համար, իսկ Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.2. Տույժի և տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ պահանջում է հետ վճարել:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, և գործում 2022 թվականի բյուջետային տարում, իսկ գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության պետական մարմնի կողմից սույն պայմանագրի N1, N2 և N3 N4 հավելվածներով հաստատվում են ծրագրի միջոցառումը, նախահաշիվը, վճարման ժամանակացույցը և իրականացման ժամանակացույցը, որոնք հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Փափազյան 23/1, բն.42
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ «Կոնվերս բանկ»ՓԲԸ
Հ/Հ 900011032670	Հ/Հ 1930001245550200
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00051617
	Էլ. փոստ՝ audio.visual@yahoo.com
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյան	ՀԿ նախագահ՝ Ա. Հարությունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ. Տ.

03.02.2022
կնքված N ԵԴ 2 պայմ.

	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	antitraffcking.am կայքի պահպանում և թարմացում	www.antitrafficking.am կայքէջն իրենից ներկայացնում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միակ հայալեզու, ժամանակակից հարթակ, որը դարձել է ՀՀ կառավարության թրաֆիքինգի դեմ պայքարի խորհրդի ոչ պաշտոնական կայքը: Պարբերաբար թարմացվող տեղեկատվության, սոցիալական հոլավակների և թիրախային ակցիաների շնորհիվ կայքէջը դարձել է հասարակության՝ հատկապես երիտասարդության իրազեկման բարձրացման և կանխարգելման լավագույն գործիքներից մեկը: Որպես չարիքի դեմ պայքարի արդյունավետ գործիք՝ կայքը դարձել է տեղեկատվական, փորձագիտական, ուսումնական նյութերի ռեսուրս պլատֆորմ՝ լրագրողների, ուսանողների, միջազգային փորձագետների համար: Մեծ է կայքէջի դերը նաև ՀԼՄ-ների նորմիզ մարդկանց թրաֆիքինգի ճիշտ	Հայաստանում և աշխարհում մարդկանց թրաֆիքինգի դեմ տարվող պայքարի լուսաբանման համար antitrafficking.am կայքի դոմեյնի և գործունեության պահպանում և պարբերաբար թարմացում:	Ծրագրի իրականացման համար նախատեսված թարմացումները հնարավորություն կտան օգտատերերին միշտ տեղեկացված և իրազեկ լինել աշխարհում և Հայաստանում մարդկանց թրաֆիքնգի մարտահրավերներին և դրանց դիմակայմանը: Ինչպես նաև այն աջակցություններին, որոնք նախատեսված են թրաֆիքինգի զոհերի համար: Երիտասարդները, որոնք լինելով կայքի հիմնական օգտատերեր՝ փաստացի ընդգրկված կլինեն ծրագրում և կայքի ոչ ֆորմալ ուսուցման շնորհիվ կկարողանան նախ և առաջ լիարժեք տեղեկացված լինել մարդկանց թրաֆիքինգի մասին, ինչպես նաև դրա կանխարգելմանը և աջակցության տրամադրմանը: Որպես գնահատման չափորոշիչներ կլինեն՝	15.12.2022	3.510.000

		լուսաբանման հարցերում:		- Թարմացված նյութերի քանակ-80 - Օգտատերերի քանակ-200 - Այցելությունների քանակ-մինչև 4000 ՀՀ-ից		
						Ընդամենը 3.510.000
						ԱԱՀ 702.000
						ԸՆԴԱՄԵՆԸ 4.212.000

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Գ. Գասպարյան

/ստորագրություն/
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա»
հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Փափազյան 23/1, բն.42
Բանկ «Կոնվերս բանկ»ՓԲԸ
Հ/Հ 1930001245550200
ՀՎՀՀ 00051617
Էլ. փոստ՝ audio.visual@yahoo.com
ՀԿ նախագահ՝
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ. Տ.

«03» 02.2

կնքված N ԵԴ 2 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«www.antitrafficking.am կայքէջի պահպանում և թարմացում» ծրագրի ծախսերի

№	Հոդվածը (հակիրճ նկարագրություն)	Չափման միավորը	Միավորի քանակը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Օրերի կամ գիշերների քանակը	Ընդամենը (ՀՀ դրամ)
1	**Վարձավճարը՝ ներառյալ հարկերը**					
1.1	Ծրագրի ղեկավար / Կայքի համակարգող	ամիս	12	90,000	X	1,080,000
1.2	Կայքի լրացրող	ամիս	12	70,000	X	840,000
	Ընդամենը				X	**1,920,000**
7.1	Գրասենյակային տարածքի վարձակալության և կոմունալ (էլ. էներգիա, ինտերնետ, ջուր, գազ) ծախսեր	ամիս	12	66,000	X	792,000
7.3	Հաշվապահության ծախս	ամիս	12	60,000	X	720,000
7.4	Հեռախոսակապի ծախս	ամիս	12	5,500	X	66,000
7.5	Դոմեյնի ձեռքբերման ծախս	հատ	1	12,000	X	12,000
	Ընդամենը				X	**1,590,000**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**3,510,000**
	ԱԱՀ				X	**702,000**
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ					**4,212,000**

** Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ աղյուսակը ավտոմատ կերպով հաշվում է ՀՀ բյուջեից պահանջվող գումարի մասը, ՀԿ ֆինանսական, ոչ ֆինանսական ներդրումների և համաֆինանսավորման տողերի գումարը անհրաժեշտ է հաշվել ինքնուրույն: Եթե ինչ-որ տողի ծախսի իրականացում ենթադրում է մի քանի աղբյուրից համատեղ իրականացում, ապա անհրաժեշտ է այն լրացնել տարբեր տողերում

** Կազմակերպությունը ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացնելիս պարտավորվում է ներկայացնել ՀԿ ֆինանսական ներդրման ծախսերը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011032670

ՀԿՀՀ 02698732

Էլ. փոստ msy@msy.am

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա»

հասարակական կազմակերպություն

ք. Երևան, Փափազյան 23/1, բն.42

Բանկ «Կոնվերս բանկ»ՓԲԸ

Հ/Հ 1930001245550200

ՀԿՀՀ 00051617

Էլ. փոստ audio.visual@yahoo.com

ՀԿ՝ նախագահ՝ Ե. Հարությունյան

/ստորագրություն/

Կ. Տ.

Հավելված N 3
«09» «02» 2022 թ. N ԵԴ-2 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ ««Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1115	Միջոցառում 11002	Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900	0.0	438.8	**877.5**	1462.5	1755.0	**2047.5**	2340.0	2632.5	**2925.0**	3217.5	3510.0	**4212.0**	**4212.0**
Ընդամենը		0.0	438.8	**877.5**	1462.5	1755.0	**2047.5**	2340.0	2632.5	**2925.0**	3217.5	3510.0	**4212.0**	**4212.0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Հայաստանի Հանրապետության
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա»
ք. Երևան, Փափազյան 23/1, բն.42
Բանկ «Կոնվերս բանկ»ՓԲԸ
Հ/Հ 1930001245550200
ՀՎՀՀ 00051617
Էլ. փոստ audio.visual@yahoo.com
ՀԿ նախագահ
Ա. Հարությունյան
/ստորագրություն/
Կ. Տ.

Հավելված N 4
«09» 02 2022թ.
կնքված N ԵԴ 2 պայմանագրի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«www.antitrafficking.am կայքէջի պահպանում և թարմացում»
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

№	Գործողություններ 2022 թվական	հունվար				փետրվար				մարտ				ապրիլ				մայիս				հունիս				հուլիս				օգոստոս				սեպտեմբեր				հոկտեմբեր				նոյեմբեր				դեկտեմբեր			
		I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
1.	Ստեղծագործական և ադմինիստրատիվ աշխատանքներ հոդվածների անձանց և կազմակերպությունների																																																
2.	Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ նորությունների և նախատեսված բաժինների վերաբերյալ նյութերի հավաքագրում, թարգմանում և տեղադրում կայքում:																																																
3.	Կայքի այցելությունների ամսական հաշվետվությունների ուսումնասիրում և համապատասխան միջոցառումների ձեռնարկում:																																																
4.	Բաժանորդների քանակի ավելացում:																																																
5.	Սոցիալական ցանցերում կայքի նյութերի լինկերի տեղադրում:																																																

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա»
հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Փափազյան 23/1, բն. 42
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ193000124555020 0
ՀՎՀՀ 00051617
Էլ. փոստ՝ audio.visual@yahoo.com
Նախագահ՝ Ս. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.